# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀՌ-ՄԱԾՁԲ-21/02

**ԹՌ-2021/01**

ք. Երևան 08"01.2021թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գ. Խումարյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա համատեղ հիշատակմամբ՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

***1.Պայմանագրի առարկան***

Կատարողը պարտավորվում է իր թվային ցանցի միջոցով իրականացնել Պատվիրատուի ռադիոծրագրի շուրջօրյա հեռարձակումը ՀՀ տարածքում, այսուհետ՝ «Ծառայություն», իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայության համար:

***2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները***

2.1. Կատարողը պարտավոր է.

2.1.1. Ապահովել Պատվիրատուի ծրագրի որակյալ և անխափան հեռարձակում:

2.1.2.Պատվիրատուի հետ համաձայնեցնել տեխնիկական միջոցների կանխարգելիչ աշխատանքների ժամանակացույցը:

2.2. Կատարողն իրավունք ունի.

2.2.1.Կանխարգելիչ աշխատանքների իրականացման համար դադարեցնել տեխնիկական միջոցների աշխատանքը:

2.2.2.Առանց նախազգուշացման՝ մասնակի կամ ամբողջությամբ դադարեցնել Ծառայության մատուցումը, եթե Պատվիրատուն խախտում է սույն պայմանագրի 3.2. կետը:

2.3. Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1.Ապահովել հեռարձակման սույն պայմանագրով նախատեսված ծավալը:

2.3.2. Մատուցված Ծառայության համար վճարումը կատարել սույն պայմանագրի 3-րդ բաժնում սահմանված կարգով:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

2.4.1.Մշտական հսկողություն իրականացնել հեռարձակման որակի նկատմամբ:

2.4.2.Տեխնիկական միջոցների վերահսկիչ չափումներ իրականացնելու համար այցելել Կատարողի տեխնիկական ծառայություններ՝ պահպանելով այցելության սահմանված կարգը:

***3. Պայմանագրի գինը և վճարման կարգը***

3.1. Պայմանագրի 1-ին կետում նշված Ծառայության համար ամսական պայմանագրային գին է սահմանվում 200 000 (երկու հարյուր հազար) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի 1-ին կետում նշված Ծառայության համար տարեկան պայմանագրային գին է սահմանվում 2 400,0 հազար (երկու միլիոն չորս հարյուր հազար) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3.2.Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է յուրաքանչյուր ամիս, Կատարողի կողմից ներկայացրած հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

***4. Կողմերի պատասխանատվությունը և դրանից ազատող հանգամանքները***

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին

կարող կանխատեսել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրի պարտավորությունների կատարումը:
Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրն՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

***5. Պայմանագրի գործելու ժամկետը***

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Սույն պայմանագրի դրույթները գործելու են 01.01.2021թ.-ից:

5.2. Եթե մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, Կողմերից ոչ մեկը, 1 (մեկ) ամիս առաջ, գրավոր չի հայտնում Պայմանագրի խզման իր ցանկության մասին, ապա Պայմանագրի գործողության ժամկետը երկարացվում է հերթական օրացուցային 1 (մեկ) տարով: Նման եղանակով պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգումը չի սահմանափակվում:

***6. Եզրափակիչ դրույթներ***

6.1.Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի համաձայնությամբ: Ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.2.Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի ռադիոծրագրի բովանդակության համար:

6.3,Պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած ժամկետում կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ 1 (մեկ) ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

6.4.Պայմանագիրը և Կողմերի միջև ամբողջ տեղեկատվությունը համարվում է գաղտնի և Կողմերը պայմանավորվում են չբացահայտել, չտարածել, չպագրել և չտրամադրել երրորդ կողմի՝ նախապես չստանալով մյուս կողմի գրավոր թույլտվությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

6.5. Պայմանագրի վերաբերյալ կամ նրա շուրջն առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում՝ վիճելի հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին երկշաբաթյա ժամկետում:

6.7. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) իրավահամազոր օրինակից՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրի մոտ:

6.8. Կատարողի առաջին իսկ պահանջով կողմը (պատվիրատուն) պարտավոր է ներկայացնել նախապես հայտարարված թվային ցանցով հանրապետական սփռում իրականացնելու իր իրավունքը հավաստող փաստաթուղթը:

***7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ք. Երևան,Ալեք Մանուկյան 5 | ք. Երևան, Նորք,Գ.Հովսեփյան 95 |
| ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 220553334321000 | ՀՀ 1570027609970100 |
| ՀՎՀՀ 01541435 | ՀՎՀՀ 01501898 |
| Պատվիրատուի կողմից | Կատարողի կողմից |
| __________ ***Գ. Խումարյան*** | __________ ***Մ. Միլիտոնյան*** |